



CONSEIL DE L'EUROPE

Տեղեկատվական փաստաթղթեր
SG/Inf(2020)11

Ապրիլի 7, 2020թ.

**Հարգելով ժողովրդավարությունը, օրենքի
գերակայությունը և մարդու իրավունքները՝ COVID-19-ի
առողջապահական ճգնաժամի շրջանակում**

Գործիքակազմ անդամ պետությունների համար

Ներածություն

Սույն փաստաթղթի նպատակն է կառավարություններին տրամադրել գործիքակազմ՝ պայքարելու ներկայիս աննախադեպ և մեծամասշտաբ առողջապահական ճգնաժամի դեմ՝ հարգելով ժողովրդավարության հիմնական արժեքները, օրենքի գերակայությունը և մարդու իրավունքները:

Հենց սկզբից ընդունվել է, որ կառավարությունները բախվել են ահռելի մարտահրավերների՝ փորձելով պաշտպանել իրենց բնակչությանը COVID-19-ի սպառնալիքից: Նաև հասկանալի է, որ հասարակության սովորական գործունեությունը չի կարող պահպանվել, հատկապես այն հիմնական պաշտպանիչ միջոցների լույսի ներքո, որոնք անհրաժեշտ են վիրուսի դեմ պայքարելու համար, մասնավորապես՝ տեղաշարժի սահմանափակումը: Ավելին՝ լիովին ընդունված է նաև այն փաստը, որ ձեռնարկվող միջոցները անխուսափելիորեն կմիջամտեն իրավունքներին և ազատություններին, որոնք օրենքի գերակայությամբ առաջնորդվող ժողովրդավարական հասարակության կարևոր և անհրաժեշտ մասն են:

Մոցիալական, քաղաքական և իրավական մարտահրավերներին բախված անդամ պետությունները պետք է կարողանան արդյունավետ հակահարված տալ ճգնաժամին՝ միևնույն ժամանակ ապահովելով, որ ձեռնարկված միջոցառումները չխաթարեն Եվրոպայի՝ մարդու իրավունքների, ժողովրդավարության և օրենքի գերակայության հիմնարար արժեքները պաշտպանելու՝ մեր երկարաժամկետ հանձնառությունը: Հենց այստեղ է, որ Եվրոպայի խորհուրդը պետք է կատարի իր հիմնական մանդատը՝ իր կանոնադրային մարմիններով և բոլոր լիազոր մարմինների և մեխանիզմների միջոցով տրամադրելով այն ֆորումը, որով հավաքականորեն կապահովվի, որ այս միջոցները լինեն վիրուսի տարածման վտանգին համաչափ և ունենան ժամանակային սահմանափակում: Վիրուսը ոչնչացնում է շատ կյանքեր, և մեզ համար թանկ շատ այլ բաներ: Մենք չպետք է թույլ տանք, որ այն ոչնչացնի մեր հիմնական արժեքներն ու ազատ հասարակությունները:

1. Արտակարգ իրավիճակներում պարտավորություններից շեղում (Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի Հոդված 15)

COVID-19-ի սպառնալիքին ի պատասխան ձեռնարկված միջոցները և դրանց կիրառման եղանակը մեծապես տարբերվում են տարբեր երկրներում՝ տարբեր ժամանակահատվածներում: Թեև անդամ պետությունների կողմից ձեռնարկվող սահմանափակող միջոցները կարող են արդարացվել Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի (Կոնվենցիա)՝ առողջապահության վերաբերյալ սովորական դրույթների հիմքով (տես Կոնվենցիայի հոդված 5-ի կետ 1ե, Հոդված 8-ի կետ 2 – 11 և Կոնվենցիայի 4-րդ արձանագրության հոդված 2-ի 3-րդ կետ), բացառիկ բնույթի միջոցները կարող են պահանջել պետությունների՝ Կոնվենցիայով ստանձնած պարտավորություններից շեղումներ: Յուրաքանչյուր պետություն պետք է գնահատի, թե արդյոք իր կողմից ձեռնարկված միջոցները հանգեցնելու են շեղումների՝ կախված Կոնվենցիայով պաշտպանված իրավունքների և ազատությունների սահմանափակումների բնույթից և չափից: Պետությունների՝ սա անելու հնարավորությունը համակարգի կարևոր հատկանիշն է, որը հնարավոր է դարձնում Կոնվենցիայի և այն վերահսկող մեխանիզմների շարունակական կիրառությունը նույնիսկ ամենակրիտիկական ժամանակներում ¹:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը կքննի բոլոր այն շեղումները, որոնց հիմքով գործեր կներկայացվեն²: Այս առումով Դատարանը պետություններին տվել է թույլատրելի հայեցողության լայն շրջանակ: *«Պայմանագրի մասնակից պետությունները՝ պատասխանատվություն կրելով իրենց «ժողովրդի կյանքի» համար՝ ունեն առաջնահերթ խնդիր՝ որոշելու, թե արդյոք «հանրային արտակարգ*

¹ Նախարարների կոմիտեի պատասխանը ԵՄԽՎ 2125 (2018) հանձնարարականին:

² Տես Կոնվենցիայի Հոդված 15-ի ուղեցույցը (2019թ. , դեկտեմբերի 31) հրապարակված Դատարանի քարտուղարության կողմից:

դրությունը» սպառնալիք է այդ կյանքի համար, և եթե այդպես է, ապա որքան հեռու է պետք գնալ՝ փորձելով հաղթահարել արտակարգ դրությունը: Ներկայիս հրատապ կարիքների հետ անմիջական և շարունակական առնչություն ունենալու պատճառով, ի տարբերություն միջազգային դատավորի, ազգային իշխանություններն ավելի լավ դիրքում են՝ արտակարգ դրության առկայության և այն կասեցնելու համար անհրաժեշտ շեղումների բնույթի և ծավալի վերաբերյալ որոշում կայացնելու համար: Այս հարցում Հոդված 15 § 1-ը (...) իշխանություններին թույլատրելի հայեցողության լայն շրջանակ է տալիս»³:

Շեղումը նաև ենթակա է ֆորմալ պահանջների. լինելով Կոնվենցիայի ավանդապահ՝ Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարը պետք է լիովին տեղեկացված լինի ձեռնարկվող միջոցների և դրանց պատճառների մասին, ինչպես նաև այն մասին, թե երբ են այս միջոցները դադարել գործել [\(<https://www.coe.int/en/web/conventions/full-list/-/conventions/webContent/62111354>\):](https://www.coe.int/en/web/conventions/full-list/-/conventions/webContent/62111354)

Կոնվենցիայի որոշ իրավունքներ որևէ շեղում թույլ չեն տալիս. կյանքի իրավունքը՝ բացառությամբ պատերազմական օրինական գործողությունների համատեքստում (Հոդված 2), խոշտանգումների և անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի արգելքը (Հոդված 3), ստրկության և հարկադիր աշխատանքի արգելքը (Հոդված 4§1) «պատիժ՝ բացառապես օրենքի հիման վրա» կանոնը (Հոդված 7): Չի կարող լինել շեղում՝ մահապատժի արգելքից կամ նույն արարքի համար կրկնակի չդատվելու կամ չպատժվելու իրավունքից (6-րդ և 13-րդ Արձանագրություններ, ինչպես նաև 7-րդ արձանագրության հոդված 4):

Հոդված 15-ից շեղումը պայմանավորված չէ ազգային մակարդակում արտակարգ դրության կամ որևէ նման ռեժիմի ֆորմալ ընդունմամբ: Մինևույն ժամանակ յուրաքանչյուր շեղում պետք է ներպետական օրենքով հստակ հիմնավորված լինի՝ կամայականությունը բացառելու համար, ինչպես նաև լինի անհրաժեշտ հանրային արտակարգ դրության դեմ պայքարի համար: Պետությունները պետք է մշտապես հիշեն, որ ձեռնարկված յուրաքանչյուր միջոց պետք է ուղղված լինի ժողովրդավարական կարգի սպառնալիքներից պաշտպանությանը, և պետք է գործադրվեն բոլոր ջանքերը՝ երաշխավորելու ժողովրդավարական հասարակության արժեքները, ինչպիսիք են՝ բազմակարծությունը, հանդուրժողականությունը և լայնախոհությունը⁴: Թեև Դատարանն ընդունել է շեղումներ՝ արդարացնելու Կոնվենցիայի չափանիշներից որոշ բացառություններ, այն երբեք չի կարող արդարացնել որևէ գործողություն, որը հակասում է Կոնվենցիայի՝ օրինաչափության և համաչափության գլխավոր պահանջներին:

2. Հարգանք օրենքի գերակայության և ժողովրդավարական սկզբունքների հանդեպ՝ արտակարգ դրության ժամանակ

2.1. Օրինականության սկզբունք

Նույնիսկ արտակարգ իրավիճակում օրենքի գերակայությունը պետք է լինի առաջնահերթ⁵: Օրենքի գերակայության հիմնական սկզբունքն է, որ պետության գործողությունները պետք է լինեն օրենքի սահմաններում:⁶ «Օրենքը» այս համատեքստում ընդգրկում է ոչ միայն Խորհրդարանի ակտերը, այլ, օրինակ, գործադիրի արտակարգ հրամանագրերը՝ պայմանով, որ դրանք ունեն սահմանադրական հիմք: Շատ սահմանադրություններ ընդգրկում են հատուկ իրավական ռեժիմ (կամ ռեժիմներ), որոնք պատերազմի կամ բնական մեծ աղետի կամ այլ աղետների ժամանակ մեծացնում են գործադիր

³Իռլանդիան ընդդեմ Միացյալ Թագավորության, 18.01.1978թ. -ի դատավճիռ, սերիա A No 25, պարբ. 207.

⁴ Մեհմեթ Հասան Ալթանն ընդդեմ Թուրքիայի, § 94 կմ 210; և Շահին Ալփայն ընդդեմ Թուրքիայի, § 78 և 180.

⁵ Տես Վենետիկի Հանձնաժողով, Կարծիք արտակարգ դրության ժամանակ մարդու իրավունքների պաշտպանության վերաբերյալ CDL-AD(2006)015, պարբ. 13.

⁶ Տես Վենետիկի հանձնաժողովի օրենքի գերակայության ստուգաթերթ (CDL-AD(2016)007), պարբ. 44 և 45.

իշխանությունների լիազորությունները⁷: Նաև հնարավոր է, որ օրենսդիր մարմինը, արդեն իսկ գոյություն ունեցող իրավական կանոններից զատ, ընդունի արտակարգ օրենքներ, որոնք հատուկ մշակված են ներկայիս ճգնաժամը հաղթահարելու համար: Ցանկացած նման օրենսդրություն պետք է համապատասխանի սահմանադրությանը և միջազգային չափանիշներին և անհրաժեշտության դեպքում ենթակա լինի Մահմանադրական դատարանի կողմից վերանայման: Եթե խորհրդարանը ցանկանում է կառավարությանը տալ լիազորություն՝ շեղվելու օրենսդրության հատուկ մեծամասնությունից (կամ այլ հատուկ ընթացակարգով ընդունված օրենսդրությունից), ապա սա պետք է արվի օրենսդրության ընդունման համար անհրաժեշտ մեծամասնության կողմից կամ նույն հատուկ ընթացակարգից հետո:

2.2. Արտակարգ դրության ռեժիմի և արտակարգ միջոցների սահմանափակ տևողություն

Արտակարգ դրության ժամանակ կառավարությունները կարող են ստանալ ընդհանուր լիազորություն՝ ներկայացնելու օրենքի ուժ ունեցող հրամանագրեր: Սա ընդունելի է այն պայմանով, որ այս ընդհանուր լիազորություններն ունենան սահմանափակ տևողություն: Արտակարգ դրության ռեժիմի (կամ նման ռեժիմի) գլխավոր նպատակն է կանխել ճգնաժամի զարգացումը և վերադառնալ նորմալ կյանքին որքան հնարավոր է արագ⁸: Արտակարգ դրության ռեժիմի երկարաձգման անհրաժեշտությունը պետք է խորհրդարանի վերահսկողության տակ լինի: Գործադիրի բացառիկ լիազորությունների անորոշ ժամանակով երկարաձգումն անթույլատրելի է⁹:

Արտակարգ դրության ժամանակ կառավարության օրենսդրության իրավասությունը ոչ միայն պետք է սահմանափակված լինի արտակարգ դրության տևողությամբ, այլև արտակարգ դրության ժամանակ ուժի մեջ մտած ցանկացած օրենսդրություն պետք է նաև ընդգրկի այս բացառիկ միջոցների տևողության հստակ ժամանակային սահմանափակումներ (ժամկետի ավարտի մասին կետ): Իրապես, արտակարգ դրության իրավիճակի ավարտից հետո հետագայում որոշ հատուկ, թիրախային միջոցների կիրառումը կարող է արդարացվել, սակայն այս երկարաձգումը խորհրդարանի իրավասության շրջանակում է՝ սովորական ընթացակարգերի միջոցով¹⁰:

2.3. Արտակարգ դրության օրենսդրության սահմանափակ ծավալը. անհրաժեշտության սկզբունք

Անհրաժեշտության սկզբունքը պահանջում է, որ արտակարգ դրության միջոցները կարողանան հասնել դրված նպատակներին՝ կանոնների և ժողովրդավարական որոշումների կայացման ընթացակարգերի նվազագույն փոփոխությամբ: ¹¹ Հետևաբար՝ կառավարության՝ արտակարգ հրամանագրեր տալու լիազորությունը չպետք է հանգեցնի նրան, որ օրենսդիրը գործադիրին տա քարտ-բլանշ: Հաշվի առնելով ճգնաժամի արագ և անկանխատեսելի զարգացումը՝ կարող է լինել օրենսդրական ավելի մեծ պատվիրակությունների անհրաժեշտություն, որոնք, սակայն, պետք է

⁷ Մինչև 2020 թ. մարտի 29-ը՝ մեր 22 անդամ պետություններ արդեն հայտարարել էին արտակարգ դրություն

⁸ Փորձը ցույց է տալիս, որ «որքան երկար է տևում արտակարգ դրության ռեժիմը, այնքան հավանական է, որ պետությունը կհեռանա այն օբյեկտիվ չափորոշիչից, որոնք գործի էին դրել արտակարգ լիազորությունները: Որքան երկար է տևում իրավիճակը, այնքան քիչ է արդարացումը դրա հետ վարվելու որպես բացառիկ բնույթ ունեցող իրավիճակ, որի դեմ անհնար է պայքարել սովորական իրավական գործիքներով», Վենետիկի հանձնաժողով, Թուրքիա- կարծիք արտակարգ դրության հրամանագրերի օրենքներ N°667-676-ի վերաբերյալ, որոնք ընդունվել են 2016 թ. հուլիսի 15-ի ձայնով և հեղաշրջումից հետո, CDL- AD(2016)037, պարբ. 41

⁹ [CommDH\(2002\)7, Կարծիք 1/2002՝ Միացյալ Թագավորության ՄԻԵԿ-ի Հոդված 5-ի պարբ. 1-ից շեղվելու վերաբերյալ](#), էջ. 25; տես նաև Վենետիկի հանձնաժողով, Չափորոշիչներ ժողովրդավարության մեջ խորհրդարանական մեծամասնության և ընդդիմության հարաբերությունների վերաբերյալ, ստուգաթերթ (CDL- AD(2019)019), պարբ. 119):

¹⁰ Տես ԵՆԽԿ բանաձև 1659 (2009), Մարդու իրավունքների պաշտպանություն արտակարգ դրության ժամանակ, էջ. 12; Տես նաև վերոնշյալ Օրենքի գերակայության ստուգաթերթը և Կոնվենցիայի հոդված 15-ը (Շեղումներ արտակարգ դրության ժամանակ), Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրի հոդված 4; Մարդու իրավունքների ամերիկյան կոնվենցիայի հոդված 27: Արտակարգ լիազորության մասով տես նաև Վենետիկի հանձնաժողովի արտակարգ դրության ժամանակ արտակարգ լիազորությունների (CDL-STD(1995)012) և մարդու իրավունքների վերաբերյալ գեկույցները (CDL-AD(2006)015):

¹¹ Անհրաժեշտության սկզբունքը չի նշվում ինստիտուցիոնալ արտակարգ դրության միջոցների համատեքստում, սակայն դրան կարելի է հանգել արտակարգ միջոցառումների համաչափության և անհրաժեշտության պահանջից մարդու իրավունքների դրոշմում – տես Վենետիկի հանձնաժողով, Կարծիք Ֆրանսիայի «Ազգի պաշտպանություն» սահմանադրական օրինագծի վերաբերյալ պարբ. 71

ձևավորվեն հնարավորինս նեղ՝ ըստ անհրաժեշտության, որպեսզի նվազի պոտենցիալ ցանկացած չարաշահման հնարավորություն: ¹² Որպես ընդհանուր կանոն՝ հիմնական իրավական բարեփոխումները պետք է ժամանակավորապես դադարեցվեն արտակարգ դրության ժամանակ:¹³

2.4. Արտակարգ դրության ժամանակ լիազորությունների և փոխզսպման բաշխումը՝ գործադիր իշխանությունների մասով

Գործադիր իշխանությունները պետք է կարողանան գործել արագ և արդյունավետ: Հնարավոր է, որ դրա համար անհրաժեշտ լինի որոշումների կայացման ավելի հեշտ ընթացակարգի ընդունում և փոխզսպման ու հակակշռման թեթևացում: Մա կարող է նաև ընդգրկել սահմանադրության թույլատրելիության սահմաններում տեղական, տարածքային և կենտրոնական իշխանությունների միջև իրավասությունների ստանդարտ բաժանման շրջանցում՝ սահմանափակ քանակությամբ ոլորտներում, որպեսզի ապահովվի ճգնաժամին ավելի համակարգված արձագանք՝ պայմանով, որ տեղական և տարածքային իշխանությունների իրավունքները կվերականգնվեն ճիշտ այն ժամանակ, երբ իրավիճակը թույլ տա:

Այնուամենայնիվ խորհրդարանները պետք է պահեն գործադիր գործողությունները¹⁴ վերահսկելու իրենց լիազորությունը՝ մասնավորապես, ողջամիտ ընդմիջումներով ստուգելով, թե արդյոք գործադիր արտակարգ լիազորությունները շարունակում են լինել արդարացված, կամ ըստ անհրաժեշտության միջամտելով՝ ստուգելու կամ չեղյալ համարելու գործադիր որոշումները:¹⁵ Արտակարգ դրության պայմաններում խորհրդարանների լուծարումը չպետք է հնարավոր լինի, և իրապես, ըստ բազմաթիվ սահմանադրությունների՝ խորհրդարանի մանդատը երկարաձգվում է մինչև արտակարգ դրության ավարտ:

Պետք է պահպանվի դատական իշխանության (մասնավորապես՝ սահմանադրական դատարանների, եթե դրանք կան) հիմնական գործառույթը: Կարևոր է, որ դատավորները կարողանան քննել մարդու իրավունքների ամենալուրջ սահմանափակումները, որոնք գործի են դրվել արտակարգ սահմանադրությամբ: Կարող են թույլատրվել հետաձգումներ, գործի արագ քննություն կամ որոշակի կատեգորիայի գործերի խմբային քննություն, և որոշ դեպքերում նախնական դատական սանկցիան կարող է փոխարինվել հետադարձ դատական վերանայումով (նաև տես ստորև, գլուխ 3.2):

Արտակարգ դրության ժամանակ ընտրություններ և հանրաքվեներ անցկացնելը կարող է խնդրահարույց լինել, քանի որ արշավ իրականացնելու հնարավորությունը շատ սահմանափակ է ճգնաժամի պայմաններում:

3. Համապատասխան մարդու իրավունքների չափանիշները

3.1. Կյանքի իրավունք (Կոնվենցիայի հոդված 2) և Խոշտանգումների և անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի արգելք (Կոնվենցիայի Հոդված 3), առողջապահական խնամքի հասանելիության իրավունք (վերանայված Եվրոպական սոցիալական խարտիայի հոդված 11)

¹² CM(2008)170, Նախարարների կոմիտեի փաստաթուղթ՝ ԵԽ-ի և օրենքի գերակայության վերաբերյալ, էջ. 46, տես նաև Վենետիկի հանձնաժողով, Չափորոշիչներ ժողովրդավարության մեջ խորհրդարանական մեծամասնության և ընդդիմության հարաբերությունների վերաբերյալ, ստուգաթերթ (CDL- AD(2019)019), պարբ. . 119 - 121, և Վենետիկի հանձնաժողով, Թուրքիա- կարծիք՝ արտակարգ դրության հրամանագրերի օրենքներ N°s667-676-ի վերաբերյալ, որոնք ընդունվել են 2016թ. հուլիսի 15-ի ձախողված հեղաշրջումից հետո, պարբ. 98.

¹³ Եվրոպական սահմանադրություններից շատերը ունեն դրույթներ, որոնք արգելում են սահմանադրական փոփոխություններ պատերազմի, արտակարգ դրության և նման այլ իրավիճակներում: Տես նաև Վենետիկի հանձնաժողով, Թուրքիա- կարծիք՝ արտակարգ դրության հրամանագրերի օրենքներ N°s667-676-ի վերաբերյալ, որոնք ընդունվել են 2016թ. հուլիսի 15-ի ձախողված հեղաշրջումից հետո, պարբ. 80 և 90

¹⁴ Տես ԵԽԽՎ հանձնարարական 1713 (2005), Անդամ պետությունների անվտանգության ոլորտի ժողովրդավարական վերահսկողություն, էջ. 38.

¹⁵ Վենետիկի հանձնաժողով, օրենքի գերակայության ստուգաթերթ (CDL-AD(2016)007), պարբ. 51.

Կյանքի իրավունքը, ինչպես նաև խոշտանգումների և անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի արգելքը, Կոնվենցիայի հիմնական իրավունքների շարքում են, քանի որ չեն կարող ենթակա լինել որևէ շեղման, նույնիսկ հանրային արտակարգ դրության դեպքում, ինչպիսին է COVID-19-ը: Դրանք մշտապես պահանջում են պոզիտիվ պարտավորություններ՝ պաշտպանելու պետության խնամքի տակ գտնվող անձանց մահացու հիվանդություններից և հետագա տառապանքից¹⁶:

Կոնվենցիան շարունակաբար պահանջում է անդամ պետություններից՝ ազատագրված անձանց համար ապահովել բժշկական խնամքի բավարար մակարդակ:¹⁷ Խոշտանգումների կանխարգելման եվրոպական կոմիտեն (ԽԿԿ) հրապարակել է Կորոնավիրուսի (COVID-19) համավարակի համատեքստում ազատագրված անձանց նկատմամբ վերաբերմունքի սկզբունքների վերաբերյալ հայտարարություն: Դրանք վերաբերում են տարբեր վայրերի, այդ թվում՝ ոստիկանության կալանավայրեր, քրեակատարողական հաստատություններ, միգրանտների պահման կենտրոններ, հոգեբուժական հիվանդանոցներ և սոցիալական խնամքի տներ, ինչպես նաև COVID-19-ի համավարակի համատեքստում կարանտինում պահվող մարդկանց համար նոր հիմնված հաստատություններ/գոտիներ: ԽԿԿ-ի սկզբունքները նաև վերաբերում են այս հաստատություններում աշխատող անձնակազմի պաշտպանությանը, ինչպես նաև կալանավորման վայրերին մշտադիտարկման անկախ մարմինների հասանելիության մշտական ապահովման անհրաժեշտությանը: Մարդու իրավունքների հանձնակատարը հրապարակել է հայտարարություն. COVID-19-ի համավարակ. անհրաժեշտ են հրատապ քայլեր՝ պաշտպանելու բանտրակյալների իրավունքները Եվրոպայում:

Բացի պետության խնամքի տակ գտնվող անձանցից՝ Կոնվենցիայի հոդված 2-ի և հոդված 3-ի պարտավորությունները կարող են նաև վկայակոչվել ծանր հիվանդություն ունեցող անձանց, հաշմանդամություն ունեցող անձանց կամ տարեց անձանց համատեքստում (տես [CM/Rec\(2014\)2 հանձնարարականը](#)՝ տարեց անձանց իրավունքները խթանելու վերաբերյալ և Մարդու իրավունքների հանձնակատարի հայտարարությունները հաշմանդամություն ունեցող անձանց և տարեց անձանց վերաբերյալ՝ COVID-19-ի համավարակի ժամանակ¹⁸): Նրանց հիվանդանալը և մեծ տառապանքը կարող են անհամատեղելի համարվել պետության՝ կյանքը պաշտպանելու և վատ վերաբերմունքը կանխելու պոզիտիվ պարտավորությունների հետ: Այս պոզիտիվ պարտավորությունը նաև հաստատվում է Եվրոպական սոցիալական (վերանայված) խարտիայի հոդված 11-ում, ըստ որի՝ անդամ պետությունները պետք է ցուցադրեն իրենց՝ վարակիչ հիվանդությունների դեմ պայքարելու կարողությունը՝ հիվանդությունների վերաբերյալ զեկուցելու և ծանուցելու համար կարգավորումներով և համաճարակի դեպքում բոլոր անհրաժեշտ միջոցների ձեռնարկումով¹⁹: Պետությունների՝ խոցելի խմբերի հանդեպ ավելի մեծ ուշադրությունը համապատասխան կլինի ժողովուրդների՝ առողջապահական խնամքի հավասար հասանելիության իրավունքին (Մարդու իրավունքների և կենսաբժշկության վերաբերյալ Կոնվենցիայի հոդված 2, «Օվիեդոյի կոնվենցիա»):

¹⁶ Տես Դատարանի քարտուղարության կողմից հրապարակված «Բանտարկյալների առողջության հետ կապված իրավունքներ» փաստաթուղթը
¹⁷ Տես Խոլդրիսին ընդդեմ Ռուսաստանի, no. 59896/00, 26 հոկտեմբերի 2006 թ. ; Ինչպես ԽԿԿ-ն նշել է կորոնավիրուսի (COVID-19) հիվանդության համավարակի համատեքստում ազատագրված անձանց հանդեպ վերաբերմունքի սկզբունքների մասին հայտարարության մեջ՝ առողջապահական խնամքի անբավարար մակարդակը կարող է արագ հանգեցնել իրավիճակների, որոնք կհամապատասխանեն «անմարդկային և նվաստացնող վերաբերմունք» եզրույցի հիմաստին:

¹⁸ Մարդու իրավունքների հանձնակատարը, ով իր աշխատանքում հաճախ է նշում, որ մեծ բնակելի տարածքները, որտեղ ազատագրված անձինք բնակվում են, անհարմար են հաշմանդամություն ունեցող կամ տարեց անձանց համար, կոչ է արել համավարակի մարտահրավերի առաջ կանգնած անդամ պետություններին դադարեցնել նման հաստատությունների նոր ընդունելությունները, դուրս բերել հաշմանդամություն ունեցող անձանց նման հաստատություններից որքան հնարավոր է շատ, և ձեռնարկել բոլոր հնարավոր միջոցները՝ պաշտպանելու մնացած բնակիչներին: Հանձնակատարի հայտարարություն. COVID-19-ի համավարակի ժամանակ տարեց անձինք ավելի շատ աջակցության կարիք ունեն, քան երբևէ, 2020 թ. մարտի 20, և COVID-19-ի համավարակի հակազդման գործընթացում հաշմանդամություն ունեցող անձինք չպետք է անտեսվեն, 2 ապրիլի, 2020 թ.

¹⁹ Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտե, եզրակացություններ XVII-2 (2005), Լատվիա

Այս առումով հարկ է հիշել՝ որակյալ դեղերի գոյությունն ու հիվանդների հասանելիությունը դրանց՝ ներկայիս COVID-19-ի համավարակի համատեքստում կարևոր է առավել քան երբևէ: Եվրոպական դեղագրքի մշակման մասին ԵՄ կոնվենցիան²⁰ նպատակ ունի ապահովելու իրավական և գիտական հիմք՝ ապահովելու դեղերի և դրանց բաղադրիչների որակը՝ մեկ աշխատանքի տեսքով, այն է՝ Եվրոպական դեղագիրք: Եվրոպական դեղագրքի հանձնաժողովի հովանու ներքո՝ 39 անդամ պետությունները և Եվրոպական միությունը, 29 դիտորդների, այդ թվում՝ ԱՀԿ-ի փորձագետների հետ միասին միավորել են ուժերը և աշխատանքը՝ ապահովելու որակի չափանիշներ, որոնք կիրառելի են բոլոր ստորագրյալ պետություններում և գործում են աշխարհի ավելի քան 120 երկրներում:

Վերջապես Կոնվենցիայով և Եվրոպական սոցիալական խարտիայով, պետությունները պարտավոր են իրագրել բնակչությանը համավարակին առնչվող հայտնի ռիսկերի և այն վարքագծի կամ միջոցների մասին, որոնք օգնում են կանխել հիվանդության տարածումը²¹:

3.2. Ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք (Հոդված 5) և Արդար դատավարության իրավունք (Հոդված 6)

COVID-19-ին հակազդելու նպատակով ձեռնարկված աննախադեպ միջոցները կարող են ազդել պետության՝ ազատության և անձեռնմխելիության իրավունքը երաշխավորելու կարողության վրա և փոխել դատական համակարգի սովորական գործունեությունը:

Հոդված 5.1(ե) կետում նշվում է, որ վարակիչ հիվանդությունների տարածման կանխարգելումը հիմքերից մեկն է, որով անձը կարող է ազատազրկվել: Մինչ նման միջոցների դիմելը՝ պետություններից ակնկալվում է վերահսկել համապատասխան իրավական հիմքի գոյությունը և դիտարկել՝ արդյոք ազատազրկման միջոցը խիստ անհրաժեշտ է, և դրա փոխարեն չի կարող կիրառվել ավելի մեղմ այլընտրանք: Այս համատեքստում կարևոր է հարկադիր ազատազրկման տևողությունն ու դրա պարտադրման ձևը պրակտիկայում:

Դատարանի մատչելիության մեթոդներն ադապտացնելու համար ձեռնարկված միջոցները պետք է համապատասխանեն Հոդված 6-ին, այդ թվում՝ այն դեպքերում, երբ անհրաժեշտ է դատական հատուկ մոտեցում (դատական գործի խոցելի կողմեր, ընտանեկան և աշխատանքային հարցերով դատական գործեր և այլն): Ոստիկանության կալանքի տակ երկար մնալը կամ ազատազրկման հետաձգված վերանայումը կարող են նպաստել Կոնվենցիայի հոդված 5-ի խախտմանը:

Հարկ է ընդունել, որ Հոդված 15-ի շեղումները կարող են ընդլայնել Կոնվենցիայի Հոդված 5-ով և Հոդված 6-ով թույլատրելի միջոցների շրջանակը և պետական իշխանությունների գործելակերպի հայեցողության շրջանակը՝ կապված որոշ ժամանակային սահմանափակումների և այլ սովորական դատական պահանջների համապատասխանության հետ: Այնուամենայնիվ, այս հանգամանքներում պետք է սկզբունքորեն դիտարկվեն կալանքի արգելքը՝ առանց իրավական հիմքի կամ դատարանի՝ ժամանակին կատարած վերանայման, ինչպես նաև կալանավորների անհրաժեշտ դատավարական երաշխիքների ապահովումը, ինչպիսին է՝ բժշկի, փաստաբանի կամ ամենամոտ հարազատի հասանելիություն: Պետությունները նաև ունեն ընդհանուր պարտավորություն՝ ապահովելու, որ դատավարությունները համապատասխանեն արդարության հիմնարար պահանջին (ինչպիսին է կողմերի հավասարությունը) և հարգեն անմեղության կանխավարկածը: Պետությունները պարտավոր են նաև ապահովել, որ չձեռնարկվի ոչ մի քայլ, որը կարող է միջամտել դատավորների կամ դատարանների անկախությանը:

²⁰Եվրոպական դեղագրքի մշակման մասին ԵՄ կոնվենցիա, ETS No. 050, Ստրասբուրգ, 22 հուլիսի 1964 թ և Եվրոպական դեղագրքի մշակման մասին ԵՄ կոնվենցիայի արձանագրություն, ETS No. 134, Ստրասբուրգ, 1 նոյեմբերի, 1989 թ.

²¹Տես ՄԻԵԴ, Գուերան և այլք ընդդեմ Իտալիայի, 1998 թ. փետրվարի 19-ի վճիռ, Դատավճիռների և որոշումների զեկույցներ1998-I, p. 227, § 58 ; Օնեիդիդի ընդդեմ Թուրքիայի [GC], no. 48939/99, 30 նոյեմբերի, 2004 թ.

3.3. Մասնավոր կյանքի իրավունք, խղճի ազատություն, արտահայտվելու ազատություն և միավորումների ազատություն

8, 9, 10 և 11 հոդվածներով երաշխավորված բոլոր իրավունքների և ազատությունների իրականացումը ժամանակակից ժողովրդավարական հասարակությունների հիմքն է: Դրանց սահմանափակումները թույլատրելի են միայն, եթե դա հիմնավորված է օրենքով և համաչափ՝ իրավական նպատակին, այդ թվում՝ առողջության պահպանմանը: Հասարակական սովորական գործողությունների զգալի սահմանափակումները, այդ թվում՝ հանրային պաշտամունքի վայրեր, հանրային հավաքույթներ և հարսանեկան կամ թաղման արարողություններ, կարող են անխուսափելիորեն հանգեցնել վերոնշյալ դրույթներով վիճելի բողոքների: Իշխանությունները պետք է ապահովեն, որ յուրաքանչյուր սահմանափակում՝ լինի դա հիմնված շեղման վրա, թե ոչ, հստակ սահմանված լինի օրենքով՝ սահմանադրական երաշխիքներին համապատասխան և հետապնդվող նպատակին համաչափ²²:

Թեև ճգնաժամի պայմաններում վերոնշյալ իրավունքների մեծ սահմանափակումները կարող են լիովին արդարացվել, քրեական խիստ պատժամիջոցները մտահոգություն են առաջացնում և պետք է լինեն ենթակա խիստ քննության: Բացառիկ իրավիճակները չպետք է հանգեցնեն քրեական պատժամիջոցների չափազանցության: Հարկադրանքի և կանխարգելման միջև արդար հավասարակշռությունը Կոնվենցիայի համաչափության պահանջին համապատասխանելու ամենահարմար մեթոդն է, եթե ոչ միակը:

Արտահայտվելու և տեղեկատվության ազատություն, լրատվամիջոցների ազատություն, պաշտոնական տեղեկատվության մատչելիություն

Արտահայտվելու ազատությունը, այդ թվում՝ տեղեկության ազատ և ճիշտ ժամանակի հոսքը, որոշիչ գործոն է լրատվամիջոցների՝ համավարակի վերաբերյալ հարցերը զեկուցելու կարողության համար: Լրատվամիջոցները և պրոֆեսիոնալ լրագրողները, հատկապես՝ հանրային հեռարձակողները, ունեն հանրությանը ճիշտ ժամանակին, ճշգրիտ և հուսալի տեղեկություն տրամադրելու, ինչպես նաև խուճապը կանխարգելելու և մարդկանց համագործակցությունը խթանելու գլխավոր դերը և հատուկ պատասխանատվությունը: Նրանք պետք է պահպանեն պատասխանատու լրագրության մասնագիտական և էթիկայի բարձրագույն չափանիշները և այսպիսով տրամադրեն ճգնաժամի վերաբերյալ հավաստի տեղեկություններ և չհրապարակեն կամ չչափազանցնեն չստուգված պատմությունները, առավել ևս՝ անհնար կամ սենսացիոն նյութերը: Բացառիկ հանգամանքները կարող են ստիպել պատասխանատու լրագրողներին չբացահայտել կառավարության սահմանափակ օգտագործման համար նախատեսված տեղեկությունները, օրինակ՝ ավելի խիստ մեկուսացման քաղաքականության իրականացման հետագա միջոցների վերաբերյալ տեղեկությունը²³:

Հանրության՝ պաշտոնական տեղեկատվության հասանելիությունը պետք է կառավարվի Դատարանի նախադեպային իրավունքում սահմանված սկզբունքներով: ²⁴ Պաշտոնական տեղեկատվության ցանկացած սահմանափակում պետք է լինի բացառիկ և համաչափ հանրային առողջապահության նպատակին: Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին կոնվենցիան (Տրոմսոյի կոնվենցիա) ընդգծում է թափանցիկության անհրաժեշտությունը և նշում, որ իր նախաձեռնությամբ և անհրաժեշտության դեպքում պետական մարմինը կձեռնարկի անհրաժեշտ միջոցներ՝ կազմելու հանրային պաշտոնական փաստաթղթեր, որպեսզի խթանի ընդհանուր հետաքրքրության հարցերում

²² Տես Մեհմեթ Հասան Ալթան ընդդեմ Թուրքիայի, 13237/17, 20 մարտի 2018թ; հավաքների ազատության մասով, տես Լաշմանկինը և այլք ընդդեմ Ռուսաստանի, no. 57818/09, 7 փետրվարի 2017, at para. 434; այս դեպքում Դատարանը վճռեց, որ ընդհանուր միջամտություն ցույցերի ժամանակ ընդունելի է, եթե կա իրական վտանգ, որ դրա արդյունքում կարող է առաջանալ անկարգություն, որն այլ ավելի քիչ միջամտող միջոցներով հնարավոր չէ կանխել և եթե արգելիքի ցույցի վրա ունեցած ազդեցությունը ակնհայտորեն զիջում է անվտանգության միջոցներին, որոնք ձեռնարկվում են այն արդարացնելու համար:

²³ Տես Եվրոպայի Խորհրդի Ուղեցույցը՝ ճգնաժամի ընթացքում արտահայտվելու և տեղեկատվության ազատության պաշտպանության վերաբերյալ

²⁴ Տես, օրինակ, *Magyar Helsinki* [GC], պարբ. 156-170).

հանրության իրազեկված մասնակցությունը:

Միննույն ժամանակ, պաշտոնական հաղորդակցումը չի կարող լինել միակ տեղեկատվական աղբյուրը համավարակի վերաբերյալ: Սա կհանգեցնի իրավական առումով մտահոգությունն առաջացնող գրաքննության և ճնշման: Լրագրողները, լրատվամիջոցները, բժշկության ոլորտի մասնագետները, քաղհասարակության ակտիվիստները և ընդհանուր առմամբ հանրությունը պետք է կարողանան քննադատել իշխանություններին և զննել նրանց հակազդումը ճգնաժամին: Որոշ թեմաներով ցանկացած նախնական սահմանափակումներ, զվ-ների փակումը կամ առցանց հաղորդակցման հարթակների հասանելիության բացահայտ արգելափակումը պահանջում են ամենաուշադիր քննադատական մոտեցումը և արդարացված են միայն բացառիկ հանգամանքներում²⁵: Համավարակը չպետք է օգտագործվի ազդարարներին²⁶ (տես ազդարարների պաշտպանության վերաբերյալ հանձնարարական CM/Rec(2014)7-ը) կամ քաղաքական հակառակորդներին²⁷ լռեցնելու համար: Ապատեղեկատվության վնասակար տարածման դեմ կարող են պայքարել հետադարձ սանկցիաներով և կառավարության տեղեկատվական արշավներով: Պետությունները պետք է համագործակցեն՝ կանխարգելելու հանրային կարծիքի մանիպուլացիան, և ավելի հայտնի դարձնելու նորությունների և տեղեկատվության վստահելի աղբյուրները, հատկապես այն աղբյուրները, որոնք կոմունիկացվում են հանրային առողջապահության իշխանությունների կողմից:

Գաղտնիություն և տվյալների պաշտպանություն

Անձնական տվյալների հասանելիության և մշակման նոր տեխնոլոգիաները ունեն համավարակի տարածումը կանխելու և այն դադարեցնելու պոտենցիալ: Համաճարակի վերահսկողության կարևոր քայլերն են՝ մշտադիտարկել, հետևել և սպասել: Զարգացած թվային տեխնոլոգիաների և գործիքների բազմապատկման և գերառատության պայմաններում (աշխարհագրական դիքրի տեղայնացման տվյալներ, արհեստական բանականություն, դեմքի ճանաչում, սոցմեդիայի հավելվածներ) համավարակին հետևելու գործընթացը ավելի հեշտ է:

Միննույն ժամանակ, չպետք է թույլ տալ, որ ժամանակակից տեխնոլոգիաների միջամտող պոտենցիալը մնա չստուգված և անհավասարակշիռ՝ անձնական կյանքի հանդեպ հարգանքի իրավունքի հետ: Տվյալների պաշտպանության սկզբունքները և ԵԽ կոնվենցիա 108-ը (և դրա ժամանակակից տարբերակը՝ Կոնվենցիա 108+՝²⁸ -ը) միշտ հնարավոր են դարձրել բարձր պաշտպանության ստանդարտների և հանրային շահերի, այդ թվում՝ հանրային առողջապահության միջև հավասարակշռությունը: Կոնվենցիան թույլ է տալիս շեղումներ՝ տվյալների պաշտպանության կանոններից սահմանափակ ժամանակով և համապատասխան երաշխիքներով (օրինակ՝ անանունացում) և արդյունավետ վերահսկողության շրջանակով՝ հավաստիանալու, որ այս տվյալները հավաքագրվում են, ենթարկվում վերլուծության, պահվում և փոխանցվում են իրավական և պատասխանատու ձևով: Արհեստական բանականության միջոցով անձնական տվյալների մեծածավալ մշակումը կարող է իրականացվել միայն այն դեպքում, երբ գիտականորեն ապացուցվի, որ հանրային առողջապահության ոլորտի պոտենցիալ օգուտները գերակշռում են այլընտրանքային՝ ավելի քիչ միջամտություն ունեցող լուծումներին: Եվրոպայի խորհրդի արհեստական բանականության փորձագիտական ցանցը²⁹ և համագործակիցները կարող են հեշտացնել այս ոլորտում գիտելիքի փոխանցումը:

3.4. Խտրականության արգելք (Կոնվենցիայի հոդված 14 և հոդված 1, Եվրոպական

²⁵ *Cumpana Mazare* [GC], պարբ. 118.

²⁶ <https://www.bbc.com/news/world-asia-china-51403795>

²⁷ Տես Եվրոպայի խորհրդի ուղեցույցը՝ ճգնաժամի ընթացքում արտահայտվելու և տեղեկատվության ազատության պաշտպանության վերաբերյալ

²⁸ **Անձնական տվյալների ավտոմատացված մշակման դեպքում անհատների պաշտպանության մասին** արդիականացված կոնվենցիա (CETS 223): https://search.coe.int/cm/Pages/result_details.aspx?ObjectId=09000016807c65bf

²⁹ Արհեստական բանականության ad hoc կոմիտե, CAHAI

սոցիալական խարտիայի արձանագրություն No. 12, Հոդված Ե) և բազմազանության ու ներառականության չափանիշներ

Խտրականության արգելքի սկզբունքը խիստ արդիական է այս համատեքստում: Շեղվող միջոցների՝ Կոնվենցիայի հոդված 15-ով «խիստ անհրաժեշտությունը» գնահատելիս Դատարանը քննում է՝ արդյոք այս միջոցները անարդարացիորեն խտրականացնում են մարդկանց տարբեր դասակարգեր³⁰: Բացի դրանից՝ խտրականության որոշ տեսակներ կարող են հանգեցնել նվաստացնող վերաբերմունքի, որին անդրադառնում է Հոդված 3-ը՝ դրույթ, որը ենթակա չէ շեղման:³¹ Ավելին՝ խոցելի խմբերի կարիքները հաշվի չառնելը կարող է հանգեցնել խտրականության:³² Խտրականության արգելքը հետևաբար ենթադրում է իրական հավասարության հասնելու նպատակով՝ դրական միջոցներ ձեռնարկելու պարտավորություններ:³³ Նույն մոտեցումը կա նաև Եվրոպական սոցիալական խարտիայում (Հոդված Ե)³⁴: Այս առումով Ազգային փոքրամասնությունների պաշտպանության շրջանակային կոնվենցիայի շատ դրույթներ, Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների վերաբերյալ Եվրոպական խարտիան, ինչպես նաև Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողովի ընդհանուր քաղաքականության հանձնարարականները պետք է դիտարկվեն որպես հավասարության և խտրականության արգելքի սկզբունքների դրսևորում:

Վիրուսի տարածման դեմ պայքարի շրջանակում ներկայումս ձեռնարկվող բացառիկ միջոցները հավանաբար հարցեր կառաջացնեն՝ կապված դրանց պոտենցիալ խտրական հետևանքների հետ: Օրինակ՝ Կոնվենցիայում (Արձանագրություն No1-ի Հոդված 2) և Եվրոպական սոցիալական խարտիայում (Հոդված 17) ամբազրված կրթության իրավունքը պետք է սկզբունքորեն ապահովվի, նույնիսկ չնայած նրան, որ անհրաժեշտ է ադապտացնել այն ապահովելու միջոցները: Անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել՝ ապահովելու, որ խոցելի խմբերի ներկայացուցիչները շարունակեն իրականացնել կրթության իրավունքը և ունենան հավասար հասանելիություն կրթության միջոցներին և նյութերին՝ տնամեկուսացման ընթացքում: Ներկայումս պատրաստվում է մանրամասն հետազոտություն գնչունների, միգրանտների, ազգային փոքրամասնությունների և ԼԳԲՏԻ անձանց ունեցած դժվարությունների և ռիսկերի, ինչպես նաև այս ճգնաժամի ընթացքում որոշ անդամ պետություններում արդեն իսկ ընդունված հատուկ ներառական մեթոդների վերաբերյալ³⁵:

4. Պաշտպանություն հանցագործություններից, հանցագործությունների գոհերի պաշտպանություն

Հաղորդված դեպքերն ու ցուցմունքները ցույց են տալիս, որ մեկուսացումն ու փակ տարածքներում մնալը հանգեցնում են ընտանեկան, սեռական և գենդերային հիմքով բռնության ավելի բարձր մակարդակների և հետևաբար նաև՝ դրանցից պաշտպանության ավելի մեծ անհրաժեշտության: Ողջունվում է այն անդամ պետությունների մոտեցումը, որոնք Ստամբուլյան կոնվենցիային³⁶ համապատասխան փորձում են միջոցներ գտնել, որպեսզի շարունակեն նման բռնության ենթարկված անձանց աջակցություն և պաշտպանություն տրամադրող ծառայությունները՝ ադապտացնելով դրանք մեկուսացման ռեժիմին: Եվրոպայի խորհուրդը կարող է տեղեկություններ

³⁰ ՄԻԵԴ, Ա. և այլք ընդդեմ Սիացյալ Թագավորության, (GC), 3455/05, 19 փետրվարի, 2009թ. , §§ 182-190.
³¹ ՄԻԵԴ, Կիպրոսն ընդդեմ Թուրքիայի(GC), 25781/94, 10 մայիսի, 2001թ. , §§ 312-315.
³² Տեւ, օրինակ, ՄԻԵԴ, Հորվաթ և Քիսն ընդդեմ Հունգարիայի 11146/11, 29 հունվարի, 2013թ.
³³ ՄԻԵԴ, Հորվաթ էնդ Քիսն ընդդեմ Հունգարիայի, 11146/11, 29 հունվարի, 2013թ. , § 116; ՄԻԵԴ, Օամն ընդդեմ Թուրքիայի, 51500/08, 23 փետրվար, 2016թ. Տեւ նաև Կոնվենցիայի Արձանագրություն No.12-ի վերաբերյալ բացատրական զեկույցը
³⁴ Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեի (ECSR) համար խտրականություն կարող է տեղի ունենալ, եթե համապատասխանաբար հաշվի չառնվեն անձանց միջև եղած բոլոր տարբերությունները համեմատական իրավիճակում, կամ եթե չձեռնարկվեն բավարար քայլեր ապահովելու, որ բոլորի համար նախատեսված իրավունքներն ու կոլեկտիվ առավելությունները իրապես հասանելի են բոլորին: Տեւ, օրինակ, e ECSR, *Confederazione Generate Italiana del Lavoro (CGIL) ընդդեմ Իտալիայի*, բողոք No. 91/2013, 12 հոկտեմբերի, 2015թ. , § 237; ECSR, *Confederation française democratique du travail (CFDT) ընդդեմ Ֆրանսիայի*, բողոք No. 50/2008, որոշում՝ 2009թ. սեպտեմբերի 9, §§ 39 և 41.
³⁵ Հետազոտությունը պատրաստվում է Հակախտրականության, բազմազանության և ներառականության հարցերով կոմիտեի կողմից (CDADI) և քննվելու է CDADI առաջին հանդիպման ժամանակ: Շուտով կայքէջում հրապարակվելու է ներածական նշում:
³⁶ Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին ԵՆ-ի կոնվենցիա, CETS No. 2010, Ստամբուլ, մայիսի 11, 2011թ. <https://www.coe.int/conventions/treaty/210>

տարածել իր անդամ պետություններում գործի դրված մեթոդների մասին, օրինակ՝ զոհերի համար՝ բռնության դեպքերի հաղորդման այլընտրանքային ձևեր³⁷: Կարևոր է նաև դիտարկել նորարարական մեթոդները, որպեսզի Մեռական շահագործումից և սեռական բնույթի բռնություններից երեխաների պաշտպանության մասին Եվրոպայի խորհրդի (Լանզարոտեի) կոնվենցիայի դրույթների լույսի ներքո այս համավարակի ընթացքում երեխաները հասանելիություն ունենան օգնության և թեժ գծերին՝ հաղորդելու բռնության, վատ վերաբերմունքի և սեռական շահագործումների մասին³⁸:

Մարդկանց թրաֆիքինգի զոհերը կարող են ավելի խոցելի վիճակում հայտնվել՝ իրավապահության և աջակցող ծառայությունների, օրինակ՝ ապաստանների սահմանափակ կարողությունների հետևանքով³⁹:

Քանի որ ժամանակակից հասարակությունները առավել քան երբևէ ապավինում են համակարգչային համակարգերին, ճգնաժամի ընթացքում չարամիտ անձինք կարող են օգտագործել դա իրենց նպատակների համար (խարդախության սխեմաները, ֆիշինգ արշավները և COVID-19-ի վերաբերյալ տեղեկություն կամ խորհուրդ տրամադրող կեղծ էջերի հաքերային գործողությունները օգտագործվում են՝ համակարգիչները վարակելու, օգտատերերի գաղտնաբառերը վերցնելու կամ խաբեությամբ վճարումներ անելու համար): Կիրառելի է նաև իրապատկերները և դպրոցների փակվելու արդյունքում ինտերնետի և սոցիալական մեդիայի ավելի շատ օգտագործումը ազդում է նրանց անվտանգության վրա: Ավելին՝ կորոնավիրուսի բռնկումը, դժբախտաբար, հանցագործներին նոր հնարավորություններ է տվել՝ օգտվելու բժշկական, անձնական պաշտպանության և հիգիենայի պարագաների մեծ պահանջարկից: Մրանց շարքում են կեղծ դեղեր կամ բժշկական սարքեր, օրինակ՝ COVID-19-ի ստուգման թեստ, որոնք հասանելի են թե օնլայն և թե համացանցից դուրս: Կեղծ բժշկական պարագաների արտադրությունն ու տրամադրումը մեծ ռիսկ են հանրային առողջապահության համար և վտանգում են կյանքի իրավունքը և առողջապահության իրավունքը: Քրեական արդարադատության մարմինները պետք է լիարժեք համագործակցեն՝ հայտնաբերելու, հետաքննելու, մեղավորներին գտնելու և հետապնդելու՝ վերոնշյալ հանցագործությունների համատեքստում: ԵՄ կոնվենցիաների շրջանակում (Կիրառական հանցագործությունների մասին կոնվենցիա (Բուդապեշտ), Մեդիկրիմ կոնվենցիա⁴⁰, Մեռական շահագործումից և սեռական բնույթի բռնություններից երեխաների պաշտպանության մասին Եվրոպայի խորհրդի (Լանզարոտեի) կոնվենցիա) մասնակից պետությունները սերտորեն համագործակցում են՝ բարելավելու քրեական օրենքի դրույթները, դատավարական լիազորությունները և միջազգային համագործակցությունը, որն անհրաժեշտ է այս վտանգների դեմ պայքարելու համար:

5. Հաջորդ քայլերը. Եվրոպայի խորհուրդը՝ ավելի արդի, քան երբևէ

Եվրոպայի Խորհուրդը ստեղծվել է՝ վերակառուցելու երկարաժամկետ խաղաղություն Եվրոպայում՝ այնտեղ եղած ամենասարսափելի պատերազմից հետո: 70 տարվա պատմության ընթացքում այն հասել է մեծ հաջողության՝ դառնալով համաեվրոպական կազմակերպություն՝ եզակի հաստատություններով, որոնք աշխարհի համար առաջատար օրինակ են: Մեր հասարակությունների այսօրվա մարտահրավերը աննախադեպ է: Նույնիսկ ճգնաժամի ամենաճանր փուլից հետո, մեր հասարակությունները ստիպված են լինելու գտնել միջոցներ՝ վերականգնելու սոցիալական և տնտեսական վնասը և մեծացնելու մեր ժողովրդավարական հաստատությունների հանդեպ վստահությունը: Ի թիվս այլոց, անհրաժեշտ կլինի անդրադառնալ մեր հասարակությունների

³⁷ Տես Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարի՝ 2020 թ. մարտի 30-ի հայտարարությունը (<https://www.coe.int/en/web/portal/-/covid-19-crisis-secretary-general-concerned-about-increased-risk-of-domestic-violence>) և Կանանց դեմ բռնության և ընտանեկան բռնության դեմ պայքարի հարցերով փորձագիտական խմբի նախագահի 2020 թ. մարտի 24-ի հայտարարությունը

³⁸ Լանզարոտե կոմիտեի նախագահի և փոխնախագահի հայտարարությունը. <https://rm.coe.int/covid-19-ic-statement-en-final/16809e17ae>

³⁹ Տես Մարդկանց թրաֆիքինգի դեմ գործողությունների փորձագետների խմբի՝ 2020թ. ապրիլի 3-ի հայտարարությունը

⁴⁰ Մեդիկրիմ կոնվենցիայի անդամ պետությունների կոմիտեն կիրառարակի առաջարկներ, թե ինչպես կիրառել Կոնվենցիան COVID-19-ի համատեքստում (<https://www.coe.int/en/web/medicrime/home>)

ամենախոցելի անհատների և խմբերի պաշտպանությանը և նրանց իրավունքները ավելի կայուն և սովորաբար կառավարման մոդելում երաշխավորելու համար:

Եվրոպայի Խորհուրդը կշարունակի գործադրել բոլոր ջանքերը՝ օգնելու իր անդամ պետություններին ներկայիս ճգնաժամի և դրա հետևանքների ժամանակ: Արդյունավետ իրավական գործիքների, տեխնիկական գիտելիքի և ազգային փորձագետների լայն ցանցը կառավարություններին և քաղաքացիներին առաջարկում է արժեքավոր գործիքներ՝ գտնելու լավագույն և ամենակայուն հակազդման ձևերը՝ պաշտպանելու հանրային առողջությունը, պահպանելու մեր հասարակությունների ժողովրդավարական բնույթը և մեղմացնելու ճգնաժամի սոցիալական հետևանքները:

Կանոնադրային մարմինները, ԵԽ-ի բոլոր հաստատությունները և Քարտուղարությունը մոբիլիզացված են և գործադրելու են բոլոր ջանքերը՝ օգտագործելու Կազմակերպության գործիքներն ու ռեսուրսները, որպեսզի տեղեկացնեն, փոխանցեն լավ փորձը և քաղված դասերը բոլոր շահագրգիռ կողմերին, այդ թվում՝ իշխանություններին, քաղհասարակությանը և քաղաքացիներին, որպեսզի գտնենք ընդհանուր արձագանքներ մեր առջև ծառայած մարտահրավերներին: Կազմակերպության բոլոր ծրագրերն ու գործողությունները (այդ թվում, պահանջի առկայության դեպքում, անդամ և ոչ անդամ պետությունների հետ համագործակցության ծրագրերը) կփոփոխվեն՝ ներառելով բաղադրիչներ, որոնք կդարձնեն Կազմակերպության ներդրումը որքան հնարավոր է իրավիճակին համապատասխան, ժամանակին և հստակ արված: